Մ. ԱՏՏԻՂԻՈՍ ՀՌԵԳՈՒՂՈՍ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

(Տես երես 94:)

ՀԱՆԴԷՍ Գ.

ՏԵՍԻԼ Ա

ՀՌԵԳՈՒՂՈՍ, ՊՈՊՂԻՈՍ

Հռ. Բազախնեա դու, սիրտ իմ. զինչ այդ անակնկալ դողումն 'ի քէն անծանօթ: Գոռացեր ընդդէմ ամեհի ալեացն ծովելոց, ընդդէմ սրտմտութեան Ափրիկին և պակուցող ձիւաղացն Լիբիոյ, և զարդիս ցրտահար դողութեամբ տպաւոր բազդիդ: Ա՜հ, ոչ ինչ անիրաւիս. այսքան վտանգ ահագին ոչ պաշարեաց երբեք զփառս իմ: Սակայն այս փառք, ով դիք, ո՞չ ապաքէն ցանկութիւն է բանակալոյ մերոցս սրտից. մինթէ ո՞չ նմանատիպ այլոց պարտ էր գերել և զաս: Ո՛ն անդր. անարի վատաց է այս բարբառ: Որ անձին եւեթ կեայ՝ տարապարտ ծնանի: Այս իմաստ գիւցական տայ մոռանալ զանձն փոխանակ այլոց: Աշխարհի ամենայն բարեաց օծան՝ փառացն խոստովանեացի պարգև: Սա վրէժ խնդրէ զամօթապարտ վինձակի մարդկան՝ յոր խարդաւանէին արգեօք անկեալք 'ի փառացն ցանկութենէ: Սա 'ի բաց զզգայութիւն պարուրէ 'ի ցաւոց, զերկիւղ 'ի վտանգից, և զարհաւիրս 'ի մահուանէ: Ընդարձակէ թագաւորութիւնս, պահ ունի քաղաքաց, յորդորէ գումարէ նահատակս առաքինութեան, ըղբարս վայրագասուն՝ 'ի քաղցրութիւն ածորէ, և 'ի մարդկանէ՝ աստուածանմանս առաջրէ: Սովա..... Եղո՜ւկ ինձ, դարձ առնէ Պօպղիոս, և երկիւղագին իմն թուի յաչս իմ: Բե՛ր արդ, զինչ զրոյցք իցեն. եհա՛ս ծերակոյտն վճիռ, զի՞նչ բաղդ իցէ իմ:

Պոպ. Տէր իմ և հա՛յր գիւցազուն. (ձե՛ռն տայ ձեռ իցէ որդւոյ):

Հռ. Կարկեցա՞ր:

Պոպ. Ո՞ տայր համբանալ լեզուիս:

Հռ. Ե՛կ խօսեաց:

Պոպ. Ես ոչ մի ինչ խնդրոց դեսպանին՝ ծերակոյտն ոչ առնէ երեսս:

Հռ. Արդ յաղթանակեաց վերստին գերերջանիկ վեհազուն Ոգին հռովմէական. գոհութիւն անմահից, ոչ կեցի վայրապար: Ո՞ւր իցէ Ամիլկար, խնդրեսցի: Ոչ ինչ այլ մնայ մեզ յերկրի աստ. զգործն մեծ կատարեցի, փութասջիք 'ի դարձ:

Պոպ. Հա՜յր իմ աշխարհելի:

Հռ. Իսկ զի՞արդ. աշխա՞րհ կարգաս որում կեանք նորա բովանդակ մաշեցան յօգուտ հայրենեաց:

Պոպ. Քա՛ւ այդ առ յինէն. և ես ինքն պաշտեմ զհայրենիս, սակայն զքոյին կապանոք աշխարհեմ:

Հռ. Կեանք մարդոյ գերութիւն է. իւրաքանչիւր տառունք են: Որ միանգամ արտասուեսն խնդրեցէ, Պօպղիէ, զծնէլոյն պարտի ողբալ զբաղդ, ոչ զիմս:

Պոպ. Այլ վայրենեացն այնոցիկ խուժադուժ մոլեգնութիւն արկցէ զքեզ, ով հայր, յարեւէ աստի:

Հռ. Արդ վախճան լիցի և իմոյ գերութեանս: Ողջամբ մնա. մի՛ եղցես զիմ կնի:

Պոպ. Ո՞չ ներես, հայր, և զվերջին անգամ պաշտօն հայրասէր գորովոյ հարկանել առ քեզ:

Հռ. Այլ ինչ խնդրեմ ես այժմ 'ի քէն: Մինչդեռ ես աճապարեմս 'ի դարձ, երթեալ դու արկցես ինձ զբանիւք զհիքացեալն Աստիղիոս քոյին հարազատ: Մի՛ եթէ նեղութիւն ոգւոց նորա մաւյլ ինչ արկանիցէ յաղթանակիս իմոյ: Կաթոգին էր միշտ առ իս. եթէ երբեք վաղեացէ ինչ ըստ չափ, ով իմս Պօպղիէ, վշտակից լեր ընդ նմա: Այդ մեզ յանհնարիցն է այժմէն պահանջել 'ի նմանէ այրասիրտ առաքինութիւն: Դու լեր նմա խորհրդական բարեաց, և յանձնէ ուսո նմին արութիւն: Առաջնորդեա նմա, արգահատեա, և զամենայն խնամս հայրական բովանդակեա առ նա. 'ի քեզ զորդեակն իմ, և զքեզ 'ի քեզ առնեմ ապաստան: Ակն ունիմ... ա՜հ տեսանեմ զի մորմոքի սիրտ քո. առաւելագունի ես արութեամբ մնայի 'ի քէն. մինթէ 'ի զուր ինչ յուսացայ: Պօպղիէ, ա՜հ, ոչ... իմ որդի ես, և հռովմայեցի ես: Մի՛ յամօթ առներ զայսմ գեղեցիկ՝ զոր ետուր մեզ զքէն. ընդ շաւիղս մեծաց գիւցազանց սկսիր երթալ: Արա ինձ թողուլ զկնի իմ արժանի զոմն ժառանգաւոր իմում սրտի. և յիշատակ քո առանց ամօթոյ ինձ արձանասցի: (էլանէ):

Պոպ. Ա՜հ և կարի արդարապէս, քաջ լեր, Պօպղիէ. դժուարին են անցքդ, սակայն յաղթել արժան է: Զայն պահանջէ արիւնն՝ որ յերակունդ խաղայ. զնոյն պահանջէ և օրինակ սիրալի յարացուցիդ որ հանդէպ աչացդ կայ արձանացեալ: Յաղթեցար յառաջնում մարտի բնական կրքիցդ, ընտրեա արդ զլաւն, հօր քում նմանեաց, և զառաջին մեղանսն քաւեա:

ՏԵՍԻԼ Բ

ՊՈՊՂԻՈՍ, ԱՏՏԻՂԻՈՍ, ՄԱԳՈՆ

Ատ. (ահիւ): Եթէ արդարև ճշմարիտ իցէ եղբայր իմ:

Մագ. (ահիւ): Պօպղիէ, ճշմարիտ իցէ արդեօք:

Պոպ. Այնպէս է. հաւաստի հրաման է ծերակուտին դառնալ Հռեգուղեայ:

Ատ. Զիա՞րդ:

Մագ. Զի՞նչ ասես:

Ատ. Առհասարակ ուրեմն նենգեցին ինձ:

Մագ. Իսկ արդ...

Պոպ. Այժմ ինչ ոչ օգնէ:

ՏԵՍԻԼ Գ

ԼԻԿԻՆԻՈՍ, ԱՄԻԼԿԱՐ, ԵՒ ԱՌԱՋԻՆՔՆ

Մագ. (փէսէալ 'ի հեռուստ): Ողորմեաց, Ամիլկար:

Ատ. (փէսէալ 'ի հեռուստ): Լիկինիէ, հա՛ս ինձ 'ի թիկունս:

Ամիլ. Փախեաւ ամենայն ակնկալութիւն:
Լիկ. Կորեաւ ամենայն:
Ատ. Ո՞ւր իցէ Հռեգուղոս. Թո՛յլ տուք ինձ գոնեայ ընդ նմա գնալ:
Պոպ. Անամ. տարապարտ ցաւքդ տրտմեցուցանեն զնա:
Ատ. Եւ ունի՞ս ինչ ակն խափանել զնա այդուիկ:
Պոպ. Ակն ունիմ եթէ 'ի միտս արդեօք լինիցի Ատտիղիոս, և անձին զգայցէ՝ եթէ ոչ 'ի դէպ նմա, ոչ արժան...
Ատ. Զի որդի եմ՝ զայն միայն զգամ ես այժմ: Թո՛յլ արա ինձ...
Պոպ. Մի՛ այդմ ակն ունիր:
Ատ. Ա՛հ, արդ հայրն իմ յինէն գաղտագնաց լինի:
Մագ. Զայդ մի՛ զանգիտեր մինչդեռ աստ է Ամիլկար:
Ատ. Զո՞ հարցից խորհուրդ, ո՞ իմ ձեռնտու. Ամիլկա՞ր:
Ամիլ. Ընդ սրտմտութիւն և ընդ հիացումն կամ գումարեալ:
Ատ. Լիկինիոս:
Լիկ. Տակաւին ոչ բաւեմ ոգի առնուլ յանակնկալ հարուածոյ աստի:
Ատ. Պոպլիէ, գոնեայ...
Պոպ. Ա՛հ, եղբայր իմ, պնդեաց սակաւիկ մի և քաջ լեր: Ահաւասիկ մերն հայր ուսուցանէ մեզ՝ զիա՛րդ պարտ իցէ տանիլ ախոյան բաղդին: Եւ որ միանգամ 'ի նմանութենէ աստի նորա վերջացեալ գտանի՝ չէ նմա արժանի:
Ատ. Ի քէն լսեմ ես զայդպիսի բանս, փոխանակ ընդ իս գուժի ձայն տալոյ: Ոչ կարեմ, Պոպլիէ, կալ 'ի վերայ խորհրդոց մտացդ:
Ամիլ. Այլ ես կամ: Աղատորդիդ Մագոն, քաջազուն ծնունդ Կարքեդոնայ, սա միայն է այժմիկ սպառազինութիւն լանջաց դորա. ո՛չ առնուս յանձն հանել 'ի ձեռաց զերի մի իբրև զսա, արձան կենդանի իւրոց արիական չահատակութեանց: Քանզի եթէ ոչ գնայցէ Հռեգուղոս՝ Մագոն մնալ ոչ ունի: Ահաւասիկ անշուշտ հաւաստիք քաջարտութեան դորա:
Պոպ. Զինէ՞ն խորհուրդք այդպիսիք. աստեղք, քամահանս ուպլխաբ. (գաղտ):
Ամիլ. Գուցէ և զամենայն ջան և հանճար յառուեստ արկեալ իցէ, չտալ թոյլ աւագանւոյն հաւանել փոխանակութեանն:
Պոպ. Կասկածանք, Լիբէացւոյ առն արդարև արժանիք:
Ամիլ. Բայց սակայն...
Պոպ. Լուռ լեր և մատո՛ ինձ ունկն: Գիտիցես զի ես եմ դատաւոր բաղդին Մագոնի:
Ամիլ. Գիտեմ յասպարէզ մարտի դաշտացն Ծուբայ պարանեցեր զնա 'ի գերութիւն, մի առ միով տապաստ արկեալ զնովաւ զընտիրս նորա. և արդ ամք իբրև հինգ են նորա, ընդ քև լինելոյ:
Պոպ. Արդ լուր զիա՛րդ արկանեմ զիշխանութիւնս 'ի գործ: Կենօք չափ վրէժխնդիր էի ես Մագոնի. քանզի նախանձաւոր եմ փառացս: Այլ զի ըստուերածս ինն Թուի առ այժմ փոխանակ ածել փառացս լուսոյ, զհայր ընդ սորկի կարծիս անգամ տալ փոխանակելոյ թէպէտ ընդ ինքնակալն ոչ կարեմ: Գիտեմ զայս քում նմանեացն գոլ անհաւատալի. սակայն յերեսաց զըպարտութեան արագ պատառեցից զամենայն պատրուակ վատախորհուրդ կասկածանացդ: Մագոն, արձակեալ ես, երթ ընդ նմա:
Մագ. Ո՛վ դիք, և է՞ արդեօք ստուգութիւն:
Ամիլ. Զնաշխարհիկ այսր առաքինութեան...
Պոպ. Ե՛րթ և դու խուժադուժ վայրագ, ուսի՛ր զի՞նչ առ մեզ օրէնք իցեն փառասիրութեան: (Էլանէ):

ՏԵՍԻԼ Դ

ԱՏՏԻՂԻՈՍ, ԼԻԿԻՆԻՈՍ, ԱՄԻԼԿԱՐ, ՄԱԳՈՆ

Ատ. (առ Լիկ. որ չուէ): Տես զանագորոնն, զիա՞րդ թողու զիս:
Մագ. (առ Ամիլ. որ չուէ): Լուա՞ր զՊոպլիոսի խօսսն:
Ատ. (առ Լիկ.): Զտա՞մս ինչ պատասխանի:
Մագ. (առ Ամիլ.): Ո՞չ գնես ինձ ունկն, սիրելիդ իմ:
Ամիլ. (որոշեալ 'ի գնալ): Բարեաւ մնա, Մագոն, ակնկալեա՛ ինձ:
Լիկ. (նոյնպէս): Ատտիլիէ, ողջամբ մնա:
Ատ. Մագ. Ցո՞վ:
Լիկ. Ապրեցուցանել զհայրդ:
Ամիլ. Արգելուլ զՀռեգուղոս:
Ատ. Իսկ զիա՞րդ:
Մագ. Բայց ո՞րպէս:
Լիկ. Վերջին չարեաց և վերջին մատուցի դարման:
Ամիլ. Գտցէ իւր նախանձորդ առաքինութեան հռովմէական պերճութիւն:
Ատ. Ընդ քեզ կամիմ լինել և ես:
Մագ. Եկից և ես զկնի քո:
Լիկ. Մի՛ վասն քո դողումն կալցի զիս:
Ամիլ. Ո՛չ, քեզ հարկ է մնալ:
Մագ. Ո՞չ յայտնես ինձ զխորհուրդ բանիդ:
Ատ. Զտա՞մս ինձ գիտել գոնէ...
Լիկ. Ցետ սակաւ միոյ գիտասցես զամենայն:
Ամիլ. Ցիս արա ապաստան:
Լիկ. ԶՀռեգուղոս կամ արգելում 'ի Հռովմ, կամ մեռանիմ: (Էլանէ):
Ամիլ. Հանցէ և Լիբիա զդիւցազունս իւր 'ի վեր. (փոյթ ի գնալ): Եթէ նուազ է 'ի մեզ գոռոզութիւն, առաքինութիւնն չէ ինչ նուազ, և ո՛չ փառացն ճանապարհ անկոխ ինչ ուղի է առ մեզ: Գոն և մեկուսի 'ի Կապիտոլիոնէ հոգիք զուգաչափք սոցին. խուն մի և այլոց մահկանացուաց խնամակալու են դիքն: (Էլանէ):
Ատ. Մագոն:
Մագ. Ատտիլիէ:
Ատ. Զի՞նչ ասես:
Մագ. Զի՞նչ յոյս կայցէ:
Ատ. Ոչ գիտեմ ստոյգ. ամբոխ յարուցանել ընթանայ Լիկինիոս. և այդ աղխաաբեր միայն եղիցի հայրենեաց առանց ապրեցուցանելոյ զհայր մեր:
Մագ. Աքանչացեալ Ամիլկար ընդ գործն Պոպլեայ ընդ մեծ, և խոցեալ 'ի գորովից անտի իւրոց, յեանիլ քան զնա 'ի մեծանձնութեան ոչ առնու յանձն: Ո՞ գիտէ զի՞նչ գործէ և յո՛ր վտանգ դիմագրաւ տայ զանձն:
Ատ. Ձեռն տուք, ո՛վ դիք, իմս Լիկինիոսի:

ՄԱԳ. Աստուածք, ձեր հովանի շարժեսցի առ գերեզմանն իմ։

ԱՏ. Ամենայն երակունք իմ լցան դողութեամբ։

ՄԱԳ. Մի՛ վեհերեսցուք, ով Ատոխլէ։ Պայծառագոյն են այժմ երկինք քան յառաջն. նշողէ ինչ յուսոյ ճառագայթ։

ԱՏ. Ա՛հ Մագոն, ճշմարիտ է. այլ չտայ ինձ զօրութիւն։ Իմ յոյս ոչ ճաճանչ է արփաւոր երկնի, այլ տխուր ճառագայթ պղտոր փայլական. ճառագայթ որ 'ի հեռուստ ընդ երեւին և ծածկի. զվտանգն մերկանայ, այլ աւաղ զի ոչ փարատէ։ (Էլանէ)։

ՏԵՍԻԼ Ե

ՄԱԳՈՆ

Արծարծանել հնարիմ զխաւարամտեալ սիրտն Ատոխլեայ. յարիութիւն խրատեմ, և ես ինքն սասանիմ։ Մինչդեռ սակաւ էր յոյսս՝ առաւել էր արիութիւնս։ Այնպէս ևեթ երկիւղ տագնապէր զիս յայնժամ սպառնացեալ չարի. իսկ արդ երկնչիմ զկորստենէ հաւատոյ բարւոյն։ Որ զյեղյեղուկ ալիս ակօսէ, կարէ լինել անդրնդոց նենգաւոր տարերն յոյս իւր դնէ։ Սակայն առ նաւահանգստին երթեալ սուզանիլ՝ անհնարին է բաղդ դժոխըմբեր։

Կը շարունակուի։

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆՔ

Հսկահասակ ծառք յԱւստրալիա.

Աւստրալիոյ նոր զարմանալեաց աշխարհին շատ նշանաւոր բաներուն մէջ մէկն ալ իր մեծամեծ կամ բարձր բարձր ծառերն են. որք և աւելի զարմանալի կ'երևան երկրին կենդանեաց պզտիկութեան համեմատելով։ Ամենէն բարձր տեսակ ծառն է Քարրի ըսուածն, և ըստ բուսաբանից Eucalypsus colossea. Ուորրըն (Warren) գետոյն եզերքը խոռաձորի մը մէջ այս ծառէն հատ մը կայ 400 անգղիացի ոտք բարձր, որուն կոճղը երկու կողմէն քարայրի պէս բացուած է, մինչէն երեք ձիաւոր իրենց կազմածով կամ բեռներով՝ քովէ քով կ'անցնին հանգիստ և համօրձակ։ Մէկ հատ մ'ալ գետինն ընկած կար 420' երկայն. ուրիշ մը Պլէք Սփըր ըսուած տեղը՝ ինչուան 480 ոտնաչափ գտնուեցաւ։ Իսկ հաստութիւն ծառոյն՝ գետնէն երեք կամ չորս ոտք վեր 40էն ինչուան 80 ոտք շրջապատով գտուած է։ Եարրա և Լադրոպ գետոց ափունքն ալ ինչուան 500 ոտք բարձրութեամբ ծառեր տեսնուած են. որք ոչ միայն ամենէն բարձր զանգակաց աշտարակներէ, այլև Եգիպտոսի մեծագոյն բուրգերէն ալ աւելի բարձր են, և անշուշտ ինչուան հիմայ տեսնուածներէն աւելի բարձրեր ալ պիտի գտուին։

Ասոնցմէ առաջ ճանչցուած ամենէն բարձր ծառն էր Ամերիկայի Գալիֆոռնիոյ Սեգուոյա (Sequoia Wellingtonia) ըսուածն, 450 ոտք. այս տեսակս աւելի հաստ կամ լայնաբոլոր կ'ըլլայ քան Աւստրալիոյ ծառերը։

Գուցէ ըստ դիպաց՝ բայց դիտելի կրնայ ըլլալ, որ այս երկու երկիրներն ալ (Աւստրալիա և Գալիֆոռնիա) այս եօթի տարիներս անուանի եղած են իրենց առատ ոսկեհանքը. ուր հարստանալու համար խուռն դիմողք՝ եթէ չզարմանան այսպիսի բուսական հրաշալեաց վրայ, գուցէ այն հին և հսկահասակ ծառերն զարմանան անոնց վրայ։

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՂԱԶԱՐՈՒ